№10(14)

ISSN 1829-4820



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

2022

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

10 (14)

ԵՐԵՎԱՆ 2022
ЕРЕВАН 2022
YEREVAN 2022

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №10 (14). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2022. – 204 с.

ISSN 1829-4820

*Журнал входит в список периодических изданий **ВАК РА***

ORCID: 0000-0001-9263-6791

© Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване

СОПОСТАВИТЕЛЬНАЯ ТИПОЛОГИЯ

МАНИПУЛЯТИВНОЕ ИСПОЛЬЗОВАНИЕ КОСВЕННОГО РЕЧЕВОГО АКТА ЖАЛОБЫ В АНГЛИЙСКОМ ИНТЕРНЕТ-ДИСКУРСЕ

Гаяне Виуловна Егиазарян
gyeghiazaryan@hotmail.com

Д.ф.н., профессор, зав. кафедрой английского языка,
Государственного университета им. В.Я. Брюсова,
Ереван, Республика Армения

Анна Грантовна Аветисян
annaavetisyan987@gmail.com

Аспирант, преподаватель кафедры английского языка,
Государственный университет им. В.Я. Брюсова,
Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

В статье рассматривается косвенный речевой акт жалобы в интернет-дискурсе, выделяются манипулятивные структуры. Выбор речевого акта жалобы обусловлен тем, что большое количество критических отзывов, преобладающих в Интернете, могут быть индикаторами манипуляций. Анализ данного речевого акта будет способствовать не только получению достоверной информации в Интернете, но и созданию надежной и актуальной онлайн-платформы.
Ключевые слова: косвенный речевой акт жалобы, манипуляция, тактика.

Որևէ միտք արտահայտելիս, անհատը ոչ միայն վերարտադրում է լեզվական կառույցներ պարունակող ասույթներ և բառեր, այլև այդ ասույթների միջոցով կատարում է որոշակի գործողություններ: Ասույթների միջոցով իրականացվող գործողությունները սովորաբար անվանում են *խոսքային ակտեր*: Վերջինիս պարզագույն օրինակներն են ***բողոքը***, ***ներողությունը, խոստումը, խնդրանքը, հաճոյախոսությունը*** և այլն [3: 47]: Թվարկված խոսքային ակտերի շարքում մեծ կարևորություն ունի բողոքի խոսքային ակտը, որի ուսումնասիրությունը և վերլուծությունը, կարծես թե, կենսական անհրաժեշտություն է դարձել:

Բողոքի խոսքային ակտը բաղկացած է խոսքային վարքագծի երկու տարբեր խմբերից՝ ուղղակի և անուղղակի: Ուղղակի բողոքները սովորաբար սպառնալիք պարունակող գործողություններ են, մինչդեռ անուղղակի բողոքները ծառայում են հանրային համերաշխության հաստատմանը: Մինչ այժմ գրականության մեջ անուղղակի բողոքներն առանձնակի ուշադրության չեն արժանացել, չնայած այն հանգամանքին, որ դրանք ամենուր են [1]:

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել ***բողոք*** պարունակող անուղղակի խոսքային ակտը համացանցային խոսույթում՝ առանձնացնելով այն կառույցները, որոնք ունեն մտաշահարկային կիրառություն:


Ամերիկյան հոգեբանական միության հետազոտողները ***մտաշահարկումը*** բնորոշում է որպես ուրիշներին շահագործելու, վերահսկելու կամ նրանց վրա ներազդելու վարքագիծ՝ ի օգուտ սեփական անձի [4]:

Մտաշահարկումը հաճախ սահմանվում է որպես ներազդման միջոց, որը չի ենթադրում պարտադրանք կամ համոզում [5]: Բողոք պարունակող առցանց տեքստերում հաճախ նկատվում է մտաշահարկային կիրառություն, որը ցույց է տալիս հեղինակի բացասական վերաբերմունքը համապատասխան նյութի, ինչպես նաև նյութի հեղինակի նկատմամբ:

Դ. Բասը, Մ. Գոմեսը, Դ. Հիգինսը և Կ. Լոթերբեկը *«Մտաշահարկման մարտավարություններ»* խորագրով հոդվածում առանձնացնում են

վեց մտաշահարկային մարտավարություններ՝ ***հրապուրանք, հարկադրում, լուռ արձագանք, պատճառաբանվածություն, տարիքային հետընթաց*** *(անգլերեն՝ regression),* ***ինքնարժեզրկում*** (Տես՝ **Նկար 1**) [2]:

Նկար 1




- ***Հրապուրանք***

Առավել հաճախ հանդիպող մարտավարությունը հրապուրանքն է, որի միջոցով անհատը քողարկում է իր բացասական մտքերն ու վերաբերմունքը և մոլորեցնում դիմացինին [6]: Համացանցային խոսույթում այս մարտավարությունը կիրառելիս օգտատերը ոչ միայն մատնանշում է իր կարևորությունը և առավելությունը, այլև շեշտում է իր հավատարմությունը և նվիրվածությունը դիմացինի նկատմամբ: Նմանօրինակ բողոքներ ենք հանդիպել ամերիկյան հայտնի Ամազոն առցանց խանութի կայքէջում [9] տեղ գտած բողոք-կարծիքներում, որտեղ օգտատերն առկա խըն-

դիրը ներկայացնելուց բացի, փորձում է մտաշահարկել իր երկարաժամկետ անդամակցությունը Ամազոն Փրայմին (Տես՝ **Նկար 2**[1]):

Նկար 2



Ներկայացված օրինակում օգտատերը կիրառելով պատկերանշանային և լեզվական մի շարք հնարներ՝ փորձում է համոզիչ դարձնել իր հրապարակումը: Որպես պատկերանշանային միջոցներ օգտատերը կիրառել է մեկից ավելի հարցական և բացականչական նշաններ՝ այդպիսով փորձելով շեշտել իր ասելիքը: Ինչ վերաբերում է լեզվական միջոցներին, հեղինակը հռետորական՝ ***Limited skips????*** հարցի միջոցով, ցանկացել է իր վրդովմունք արտահայտել կատարվածի վերաբերյալ, սակայն հենց ինքը պատասխանելով իր հրապարակմանը՝ ***Not cool!!!!***, պարզապես հավաստիություն է հաղորդում: Ապառնի ժամանակի կիրառությունը՝ ***will be cancelling my subscription,*** ենթադրում է, որ օգտատերը կհրաժարվի իր բաժանորդագրությունից, սակայն դժվար է հստակ նշել՝ արդյոք սպառնալիք թվացող այս հրապարակումը դարձել է իրականություն, թե ոչ: Նման անհստակությունը հրապարակմանը մտաշահարկային բնույթ է հաղորդում:


➢ ***Հարկադրանք***

Մտաշահարկման հաջորդ մարտավարությունը ***հարկադրանքն*** է: Քեմբրիջի բառարանը ***հարկադրանքը*** սահմանում է որպես ուժի կիրա-

[1] https://www.amazon.com/How-Write-Complaint-Letter/product-reviews/B01FNI1386/ref=cm_cr_getr_d_paging_btm_next_5?filterByStar=critical&pageNumber=5 (Date of access: 26.11.2022).

ռում, որի նպատակն է մեկին համոզել անել մի բան, որը նա չի ցանկանում անել [7]: Հարկադրանքը կարող է դիտարկվել նաև օգտատիրոջ այնպիսի բողոք-հրապարակումները, որոնք պարունակում են ագրեսիվ վարքագիծ և կամքի թելադրանք (Տես՝ **Նկար 3**[2]):

Նկար 3



Վերոբերյալ օրինակում առանձնակի ուշադրություն է գրավում հրապարակումը մեկնարկող ***fed up*** ածականի կիրառությունը, որը մատնանշում է տվյալ օգտատիրոջ հոգեկան խիստ հուզմունքը և դժգոհությունը տվյալ իրավիճակի առթիվ: Իր վրդովմունքը և բարկությունը օգտատերը շարունակում է արտահայտել՝ կիրառելով ***Stop being so greedy!!!*** և ***you need to bring those jobs back to the US*** կառույցները: Առաջին կառույցում շեշտադրվում է ***greedy*** բացասական երանգ ունեցող ածականը՝ բազմակի բացականչական նշանների միջոցով, իսկ երկրորդ կառույցում ***need*** եղանակավորող բայի միջոցով հեղինակն իր հորդորն է հաղորդում և նշում է, որ իր ասելիքի իրագործումը անհրաժեշտություն է: Նման պատկերանշանային և լեզվական միջոցների կիրառությունը մտաշահարկային երանգ են հաղորդում ասելիքի:

- **Լուռ արձագանք**


[2] https://www.amazon.com/How-Write-Complaint-Letter/product-reviews/B01FNI1386/ref=cm_cr_getr_d_paging_btm_next_10?filterByStar=critical&pageNumber=10 (Date of access: 26.11.2022).

Համացանցային խոսույթում գրեթե անհնարին է գտնել այնպիսի բողոքներ, որոնք պարունակեն մտաշահարկման ***լուռ արձագանք*** մարտավարությունը: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ նման մարտավարությունը ենթադրում է խոսքային հաղորդակցություն, իսկ համացանցային խոսույթին բնորոշ է ոչ խոսքային հաղորդակցությունը: Թերևս հետաքրքրական է նշել, որ *լուռ արձագանք* կարող ենք նկատել այն պարագայում, երբ օգտատերը պարզապես կոճակի միջոցով «աստղեր» է շնորհում արտադրանքին (անգլերեն՝ rating): Օրինակ՝ եթե օգտատերը գնահատում է «1 աստղ» և չի նշում պատճառները, այդ երևույթը կարող է դիտարկվել մտաշահարկում:

➢ **Պատճառաբանվածություն**

Բողոքներում առավել հաճախ կիրառվում է ***պատճառաբանվածության*** մտաշահարկային մարտավարությունը, որի միջոցով հեղինակը, քողարկելով իր հրապարակման մտաշահարկային կիրառությունը, փորձում է վստահեցնել, որ ասելիքը համապատասխանում է ճշմարտությանը: Նման մարտավարությունը պարունակում է պատճառների շղթա, որոնց նպատակն է մոլորեցնել ընթերցողին (Տես՝ **Նկար 4**[3]):

Նկար 4


Peggy Scholz

Amazon music not so free anymore

Reviewed in the United States on November 18, 2022

What's with the change in the app, Amazon?? It used to be the pop up add for Amazon music unlimited would just happen when I opened the app. Now, I can't play the songs in my playlist?? What are you thinking? Oh, yeah…you want to make more money off us by getting us so frustrated with the app that we resign to the fact that we have to purchase unlimited for an extra $11/ month in order to get the performance we used to get as part of the service with being an Amazon prime customer. I call that greedy and manipulative. I may just go back to iTunes and drop my subscription.

Helpful | Report abuse

[3] https://www.amazon.com/How-Write-Complaint-Letter/product-reviews/B01FNI1386?pageNumber=3 (Date of access: 26.11.2022).

Վերոնշալ օրինակում հեղինակը բազմաթիվ մեղադրական հարցադրումների միջոցով՝ ***What's with the change in the app, Amazon??, Now, I can't play the songs in my playlist??, What are you thinking?*** փորձում է ոչ թե ստեղծված իրավիճակի պատճառները ներկայացնել ընթերցողին, այլ ստիպել նրան մտածել, որ Ամազոն ընկերության նպատակն է գումար կորզել և ավելի շատ եկամուտ ստանալ: Ասվածը շեշտադրելու նպատակով հեղինակը հեգնաբար կիրառում է ***Oh, yeah…*** ձայնարկությունը, ինչպես նաև որպես պատկերանշանային միջոց ընտրում է բազմակետը: Հարկ ենք համարում նշել, որ տվյալ հրապարակման մեջ հեղինակը ներառել է նաև հրապուրանքի և հարկադրանքի մտաշահարկային մարտավարությունները:

➢ ***Տարիքային հետընթաց***


Մտաշահարկման մեկ այլ մարտավարություն է ***տարիքային հետընթացը***, որը ըստ Զիգմունդ Ֆրոյդի, մեծահասակների վարքագծային և հոգեբանական վերադարձն է իրենց կյանքի առավել վաղ շրջանի: Սա պաշտպանական մեխանիզմ է, որը թույլ է տալիս մեծահասակներին խուսափել դժվարություններից և դժբախտություններից [8]: Համացանցային խոսույթում նման վարքագիծ պարունակող հրապարակումներ չենք հանդիպել, քանի որ այն, ինչպես *լուռ արձագանք* մարտավարությունը, բնորոշ է բանավոր խոսքին:

➢ ***Ինքնարժեզրկում***

Ինքնարժեզրկում մարտավարությունը նույնպես լայն տարածում է գտել համացանցում հասանելի բողոքներ-հրապարակումներում (Տես՝ **Նկար 5**[4]):

[4] https://www.amazon.com/How-Write-Complaint-Letter/product-reviews/B01FNI1386/ref=cm_cr_arp_d_viewpnt_rgt?filterByStar=critical&pageNumber=1 (Date of access: 26.11.2022)

Նկար 5


Anthony s

Amazon Prime Music

Reviewed in the United States on November 12, 2022

I'm sure this is petty and sounds like I'm being a whiner but it has to be said. Amazon music with Prime was great. Tons of songs, free to listen and build custom Playlist that I could listen to off line on trips when I have no signal or radio. That being said, WHAT THE HELL HAPPENED?! I get switching to shuffle play to make people was to pay even more for music unlimited but why did you start adding crap to my playlist? Crap I don't want or even like. Up until recently Music was the only reason we kept prime. Now I'm wondering if it's still worth it. Trying to get my "unlimited" money you may lose my Prime instead.

4 people found this helpful

Helpful | Report abuse

Վերոբերյալ օրինակում հեղինակը բողոքը ներակայացնելիս, արժեզրկում է իր ասելիքը՝ կիրառելով ***this is petty and sounds like I'm being a whiner*** նախադասությունը: ***Petty*** և ***whiner*** բացասական երանգ պարունակող բառային միավորները կիրառելով՝ հեղինակը նախ փորձում է թվալ խղճալի, այնուհետև շարունակելով իր կոշտ ասելիքը՝ վերածում է այն սպառնալիքի: Այս երևույթը թույլ է տալիս ենթադրել, որ հրապարակումը կրում է մտաշահարկային բնույթ:

Ամփոփելով կատարված հետազոտությունը՝ կարող ենք եզրակացնել, որ բողոք-հրապարակումները պարունակում են մի շարք պատկերանշանային և լեզվական միջոցներ, որոնք մտաշահարկային բնույթ են կրում: Այդ միջոցները կիրառվում են մտաշահարկային որևէ մարտավարության իրականացմամբ՝ դարձնելով դրանց իրագործումը ավելի արդյունավետ և ազդեցիկ:

ЛИТЕРАТУРА

1. *Boxer D*. Complaints: How to Gripe and Establish Rapport // Martinez-Flor, A., Uso-Juan, Speech Act Performance: Theoretical, Empirical and Methodological Issues – John Benjamins Publishing Company, 2010. № 26. – 277 p.
2. *Buss D., Gomes M., Higgins D., Lauterbach K.* Tactics of Manipulation // Journal of Personality and Social Psychology, 1987. – Vol. 52, № 6. – PP. 1219–1229.
3. *George Y.* Pragmatics, Oxford University Press, 1996. – 47 p.

4. APA Dictionary of Psychology [Electronic resource]. – Mode of access: https://dictionary.apa.org/manipulation (Date of access: 26.11.2022).
5. Stanford Encyclopedia of Philosophy [Electronic resource]. – Mode of access: https://plato.stanford.edu/entries/ethics-manipulation (Date of access: 26.11.2022).
6. Medium [Electronic resource]. – Mode of access: https://medium.com/practical-growth/tactics-of-master-manipulators-69da1ebb2ed (Date of access: 26.11.2022).
7. Cambridge Dictionary [Electronic resource]. – Mode of access: https://dictionary.cambridge.org/dictionary/english/coercion (Date of access: 26.11.2022).
8. LinkedIn [Electronic resource]. – Mode of access: https://www.linkedin.com/-pulse/manipulation-regression-beginners-guide-vassilis-antonas (Date of access: 26.11.2022).
9. Amazon [Electronic resource]. – Mode of access: https://www.amazon.com/ (Date of access: 26.11.2022).

ԲՈՂՈՔԻ ԱՆՈՒՂԱԿԻ ԽՈՍՔԱՅԻՆ ԱԿՏԻ ՄՏԱՇԱՀԱՐԿԱՅԻՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԵՐԵՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

Գ.Վ. Եղիազարյան

gyeghiazaryan@hotmail.com

Բ.գ.դ., պրոֆեսոր,
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի
անգլերենի ամբիոնի վարիչ,
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Ա. Հ. Ավետիսյան

annaavetisyan987@gmail.com

Վ. Բրյուսովի պետական համալսարանի
անգլերենի ամբիոնի ասպիրանտ, դասախոս,
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվում է բողոք պարունակող անուղղակի խոսքային ակտը համացանցային խոսույթում՝ առանձնացնելով այն կառույցները, որոնք ունեն մտաշահարկային կիրառություն: Բողոքի խոսքային ակտի ընտրությունը պայմանավորված է համացանցում հասանելի բողոք-հրապարակումների մեծ քանակով, որոնք մեծամասամբ կրում են մտաշահարկային բնույթ: Նշված խոսքային ակտի առանձնահատկությունների վերհանումը ոչ միայն կնպաստի ճշգրիտ տեղեկատվության ձեռք բերմանը, այլև կստեղծի համացանցային հավաստի հարթակ:

Բանալի բառեր՝ բողոքի անուղղակի խոսքային ակտ, մտաշահարկում, մարտավարություն:

THE MANIPULATIVE USE OF THE INDIRECT SPEECH ACT OF COMPLAINT IN ENGLISH INTERNET DISCOURSE

G. Yeghiazaryan
gyeghiazaryan@hotmail.com

Doctor of Philological Sciences, Professor,
Head of the Department of English,
Brusov State University,
Yerevan, Republic of Armenia

A. Avetisyan
annaavetisyan987@gmail.com

PhD Student, Lecturer at the Department of English,
Brusov State University,
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

The article touches upon the indirect speech act of complaint in Internet discourse, distinguishing those manipulative structures. The choice of the speech act of complaint is determined by the fact that a large number of critical reviews which prevail on the Internet can be manipulation indicators. The analysis of the given speech act will not only contribute to the acquisition of accurate information on the Internet but also create a reliable and pertinent online platform.

Keywords: indirect speech act of complaint, manipulation, tactics.

Информация о статье:
статья поступила в редакцию 28 ноября 2022 г.,
подписана к печати в номер 10 (14) / 2022 – 01.12.2022 г.